

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ N 13/5**

ք. Երևան

26 մայիսի 2023 թ.

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍԹԵՄ ԴՊՐՈՑԻ 2023-
2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՉԱՓՆ ԸՍՏ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 49-րդ հոդվածի 19-րդ կետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհուրդը որոշում է.

1. հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ՍԹԵՄ դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա ուսման վարձի չափն ըստ դասարանների՝ համաձայն Հավելվածի:
2. Ուսման վարձը գանձվում է ըստ կիսամյակների. 1-ին կիսամյակում՝ մինչև սեպտեմբերի 30-ը, 2-րդ կիսամյակում՝ մինչև փետրվարի 28-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍԱՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի
2023 թ. մայիսի 26-ի թիվ 13/5 որոշման
Նախագահ՝ Հովհաննես Հովհաննիսյան

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍԹԵՄ ԴՊՐՈՑԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՉԱՓԸ՝ ԸՍՏ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ

Աղյուսակ 1¹

Ը/Ը	Կրթական ծրագիր	Դասարան	Ուսման վարձ/առկա/հազ. դրամ
1	Միջնակարգ (ընդհանուր) հանրակրթական կրթական ծրագիր	10-րդ	640 000
2		11-րդ	640 000
3		12-րդ	640 000

Աղյուսակ 2

Ը/Ը	Կրթական ծրագիր	Դասարան	Ուսման վարձ/առկա/հազ. դրամ
1	Միջնակարգ (ընդհանուր) հանրակրթական կրթական ծրագիր	10-րդ	800 000
2		11-րդ	800 000
3		12-րդ	800 000

¹ Աղյուսակ 1-ում սահմանված ուսման վարձը նախատեսված է միայն ԵՊՀ հիմնական աշխատողների երեխաների համար: